Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, 0011, Ա. Արմենակյան 125/1;
Հեռ.՝ +374 77 505 606; Էլ.փոստ՝ info.sdifund@gmail.com

ՀԲ-2025/11-54
24.11.2025թ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապոյան

Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամը 2019թ-ից ակտիվ գործունեություն է իրականացնում գյուղատնտեսության, արդյունաբերության, կանաչ տնտեսության, բնապահպանության, էներգետիկայի, ստանդարտացման և սերտիֆիկացման բնագավառներում: Հիմնադրամը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հիմնական ոլորտներում ունի մասնագիտական փորձառություն և իրականացրել է ոլորտին առնչվող մի շարք ծրագրեր և փորձագիտական աշխատանքներ:

Մասնավորապես.

- ✓ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում,
- ✓ խոշոր ձեռնարկություններում ԻՍՕ ստանդարտների՝ ԻՍՕ 9001:2015, ԻՍՕ 45001:2018, ԻՍՕ 170025:19, ԻՍՕ 22000:19 մշակում և ներդրում,
- ✓ շինարարական նյութերի փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման խորհրդատվական ծառայություն,
- ✓ ազգային և մարզային մակարդակներում ռեսուրսների մոբիլիզացման 3 պլանների մշակում,
- ✓ հողերի համապարփակ կառավարման և արոտավայրերի կառավարման պլանների մշակում և ներկայացում,
- ✓ էներգետիկ աուդիտի իրականացում,
- ✓ «Սերտիֆիկացված որակի կառավարման համակարգեր»-ի համապատասխանության հսկողություն և աուդիտ:

Խնդրում եմ Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամը ներգրավվել ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում: Խորհրդի աշխատանքներին կմասնակցի Հիմնադրամի գլխավոր տնօրեն Հայկ Բադալյանը (h.badalyan@sdif.am, +374 91 31 54 68) և/կամ գլխավոր տնօրենի տեղակալ Վահան Դավթյանը (v.davtyan@sdif.am, +374 99 12 66 26):

Կից՝ պահանջվող փաստաթղթերի փաթեթը:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԲԱԴԱԼՅԱՆ